


3797

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.



Խ. ՔՆՈՒՆԻ




ՀԱՆՐԱՅԻՆ
ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

18845

ԿՈՒՄՅՐԱՏ

1933

ՅԵՐԵՎԱՆ



342.739


Գրականագիտության թանգարանի, միացն'ը.


Խ. Գ Ն Ո Ւ Ն Ի

ՀԱՆՐԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

18845
A II
38332

Խմբագրեց Հ. Գալիկյան
Լեզվական խմբ. Վ. Թերզիբալյան





ՀԱՆՐԱՅԻՆ (ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒ- ԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀԱՐՅ. — Ինչո՞ւ ոգոստոսի 7-ի վորոշումը հրապարակվեց 1932 թվին և վոչ առաջ:

ՊԱՏ. — 1932 թվին Խորհրդային Միության բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիությունը հաջողությամբ կատարելով և գերակատարելով առաջին հնգամյակը չորս տարում և ավարտելով սոցիալիզմի հիմքի կառուցումը՝ պատրաստվեցին յերկրորդ հնգամյակի, այն է՝ անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու մեծ գործին: Ինչպես և արագաման ասպարիզում մեր ունեցած խոշոր հաջողությունները, կոլտնտեսային շինարարության շտեմնված վերելքը, ինչ խոսք, վոր տեղի ունեցան դասակարգային պայքարի լարված պայմաններում: Այդ հաջողությունները ձեռք բերվեցին շնորհիվ նրան, վոր լենինյան կուսակցության գլխավոր գիծն անշեղ կերպով կենսագործվեց Համկոմկուսի կենտկոմի և նրա հանձարեղ առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ: Կուսակցությունը համատարած կուլեկտիվացման հիման վրա, իրեն դասակարգ, լիկվիդացիայի յենթարկելու լոզունգը հաջողությամբ կիրառվեց կյանքում, իսկ այդ լոզունգի կիրառման արդյունքը մահացու հարված եր դասակարգային թշնամիու: համար: Իբրև սրինակ կարելի յե բերել մեր սոցիալիստական գյուղատնտեսության սճման աննախընթաց տեմպերը: 1928 թվին կոլտնտեսությունների կողմից ցանված 2 միլիոն հեկտարի փոխարեն՝ 1933 թվին կոլտնտեսությունները ցանել են ավելի քան 90 միլիոն հեկտար: Մինչդեռ կուլակները, վորոնք 1928 թվին ցանել էին մոտ 15 միլիոն հեկտար, ջախջախված և դուրս շարված լինելով իրենց արտադրական գիրքերից, 1933 թվին ցանել են հազիվ մեկ միլիոն հեկտար, այն ել Խորհրդային Միության

համեմատաբար հետամնաց գյուղատնտեսական շրջաններում: Իսկ կոլտնտեսային շինարարության աճումը ցույց է տալիս, վոր 1928 թվին կոլեկտիվ տնտեսություններում միացված 400 հազար տնտեսությունների փոխարեն՝ 1932 թվին կոլտնտեսություններում ներգրավված են ավելի քան 14 ու կես միլիոն գյուղացիական տնտեսություններ: Յեւ ահա շնորհիվ գյուղի սոցիալիստական վերակառուցման և կապիտալիստական տարրերի վրա ծավալուն ճակատով արշավին, իր տնտեսական դիրքերից դուրս շարժված կուլակությունն ու նրա քաղաքական ազննություն, իր մոտալուտ մահվան գիտակցութամբ մոլեգնած՝ վերջին և վճռական պայքարն սկսեց մեր դեմ, ծայրաստիճան սրվեց դասակարգային պայքարը: Մեր դասակարգային թշնամին հարմարվելով փոփոխված դրությանը, նոր պայմաններում նոր մեթոդներով սկսեց պայքարել մեր դեմ: Նա, նոր դիմակ հագած, խցկվեց կոլտնտեսությունները և խորհրդային տնտեսության հիմնարկ-ձեռնարկները՝ վոչ թե շինարար, այլ կազմալուծող, քայքայիչ աշխատանք կատարելու համար: Կոլտնտեսությունների դեմ ուղղակի դրոճ տալուց անցավ ընդհատակյա աշխատանքի, վորսկսզի կոլտնտեսային շինարարությունը կարողանա ներսից պայթեցնել: Վորովհետև, — ինչպես ասում է ընկեր Ստալինը, — «Դասակարգային թշնամին կարծես ընազդաբար զգում է, վոր խորհրդային տնտեսության հիմքն է կազմում հանրային սեփականությունը, վոր պետք է քայքայել հենց այդ հիմքը, խորհրդային իշխանությանը վնասելու համար. և դասակարգային թշնամին իրոք աշխատում է քայքայել հանրային սեփականությունը, կազմակերպելով մասսայական գողություն և հափշտակություն»: Իրերի այս գրությունը նկատի ունենալով՝ ԽՍՀՄ Կենտգործկոմն ու Ժողկոմխորհը 1932 թվի ոգոստոսի 7-ին հրապարակեցին պատմական մի վորոշում «պետական ձեռնարկությունների, կոլտնտեսությունների և կոսպեբացիայի գույքի պահպանության և հանրային (սոցիալիստական) սեփականության ամրապնդման մասին», հանրային սեփականությունը համարելով սրբազան և անձեռնմխելի:

2. ՀԱՐՅ. — 1932 թվի ոգոստոսի 7-ի վորոշումը ժամանակավոր ե, թե վսչ:

ՊԱՏ. — Խորհրդային որենքներն ու վորոշումներն անմիջականորեն բղխում են մեր իրականությունից, տնտեսական և քաղաքական պատճառներից և նպատակ ունեն ապահովելու բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության շահերը: Ինչպես վոր առանց պատճառի հետևանք լինել չի կարող, այնպես էլ առանց տնտեսական և քաղաքական վորոշ հիմունքների և անհրաժեշտության որենք կամ վորոշում հրատարակվել չի կարող: Նշանակում ե, վոր յերբ կվերանան տվյալ որենքին ծնունդ տվող տնտեսական-քաղաքական պատճառները, կվերանա նաև այդ պատճառների անմիջական հետևանքը հանդիսացող որենքին անհրաժեշտությունը: Յեղնելով այս տեսակետից՝ կարող ենք ստել, վոր յերբ անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելով՝ մենք կվոչնչացնենք վոչ միայն կապիտալիստական դասակարգերի մնացորդները, այլ առհասարակ կվերացնենք նաև դասակարգերը, յերբ արտադրության բոլոր միջոցները կդառնան հանրային սեփականություն, յերբ ամբողջ ազգաբնակչությունը կվերածվի սոցիալիզմ կառուցող ակտիվ և գիտակից մարտիկների, յերբ չեն լինի հափշտակողներ, վնասարարներ ու ժուլիկներ՝ չի լինի նաև ոգոստոսի 7-ի վորոշման կարիքն ու անհրաժեշտությունը. այսպիսով պարզ ե, վոր ոգոստոսի 7-ի վորոշումը ժամանակավոր բնույթ ունի:

3. ՀԱՐՅ. — Ինչից յեղնելով բուրժուազիան մասնավոր սեփականությունը հայտարարեց սրբազան և անձեռնմխելի:


ՊԱՏ. — Կապիտալիստական տնտեսության հիմքը մասնավոր սեփականությունն ե. հենց դրա համար ե, վոր բուրժուական որենսդրությունն իբրև սրբություն ե ճանաչում այն, և յեղնելով իր դասակարգային շահերից, որենքի ամենայն խստությամբ պաշտպանում ե մասնավոր սեփականությունը՝ վորպես բուրժուական իրավակարգի հիմք հայտարարելով այն՝ սրբազան և անձեռնմխելի:

4. ՀԱՐՑ. — Ի՞նչ տարբերութիւն կա մասնավոր և հանրային սեփականութեան մեջ և ի՞նչո՞ւ համար ոգոստոսի 7-ի վորոշումը պաշտպանում է վերջինը:

ՊԱՏ. — Ի՞նչպէս մասնավոր սեփականութիւնը բուրժուական տնտեսութեան և իրավակարգի, այնպէս ել հանրային (սոց.) սեփականութիւնը խորհրդային տնտեսութեան և իրավակարգի հիմքն է հանդիսանում: Վոչ մի հավասարութիւն, անգամ մոտավոր նմանութեան գիծ գնել չի կարելի սեփականութեան այդ յերկու հիմնովին տարբեր սխտեմների միջև, քանի վոր նրանք սկզբունքորեն միանգամայն տարբեր և իրար հակադիր իրավակարգի հիմքեր են հանդիսանում և ապահովում են տարբեր դասակարգի շահերը: Հանրային (սոց.) սեփականութիւնը խորհրդային տնտեսութեան և իրավակարգի հիմքն է հանդիսանում և պաշտպանում է բանվոր դասակարգի և աշխատավոր դուրսացիւթեան շահերը: Ահա թե ինչու ոգոստոսի 7-ի վորոշումը պաշտպանում է հանրային (սոց.) սեփականութիւնը:

5. ՀԱՐՑ. — Ի՞նչ վերաբերմունք ունեն աջ ոպորտունիստները դեպի ոգոստոսի 7-ի վորոշումը:

ՊԱՏ. — Աջ ոպորտունիստները, ինչպէս հայանի յե, դեմ լինելով մեր յերկրի ինդուստրացման ստալինյան տեմպերին, փաստորեն դեմ էյին դուրս գալիս նաև կուսակցութեան կողմից առաջադրված՝ կուլակութիւնը վորպէս դասակարգ վերացնելու լուրջունդին: Նրանք ծածկելով և չցանկանալով տեսնել սոցիալիզմի կառուցման յերկրում բարբոքված դասակարգային պայքարի ակներև փաստը, գտնում էյին, վոր մեր յերկրում «չնչին փոքրամասնութիւն» կազմող կուլակները խոշոր փտանդ չեն ներկայացնում մեզ համար, վոր յեթե խորհրդային իշխանութիւնը «մի քիչ մեղմ» վարվի նրանց հետ, նրանք—կուլակները շատ շուտով «կներածեն» սոցիալիզմի մեջ: Կուլակների նկատմամբ այսպիսի տեսակետ ունենալով, աջ ոպորտունիստները կարծում են, վոր նրանց դեմ վոչ թե պիտի պայքարել ոգոստոսի 7-ի և նման այլ արտակարգ վորոշումներով, այլ քոպարկելով մեր յերկրում սրված դասակարգային պայքարի փաստը, սեպք:



և անտեսել նաև հանրային (սոց.) դույքի հրեզոգումները համըն-
տակումներն ու միասարարությունները, պիտի ունենան և շարժանել
այդ բոլորին և սպասել, վոր կուլակն ու միասարարությունը մի
կառուցման տեմպերով վողկորված, կլծվեն հանրագուտ աշ-
խատանքի: Սակայն իրականությունը ջախջախեց աջ ոպորտու-
նիստների բոլոր յենթագրությունները, խորտակեց նրանց
հույսերը և հանրային (սոց.) դույքին ձեռք մեկնող միասարարնե-
րին, կուլակին իր արժանի տեղը ցույց տալու համար կենսական
անհրաժեշտություն դարձրեց ոգոստոսի 7-ի պատմական որենքը:
Այդ ոպորտունիստներ նկատվել են նաև դատական գծով աշ-
խատողների մեջ: Յեղևի են այնպիսի դատավորներ, վորոնք
իրենց վճիռները կայացնելիս բարեհոգի վերաբերմունք են ցու-
ցարերել դասակարգային թշնամու հանդեպ: Այս փաստերը
խոսում են այն մասին, վոր ոգոստոսի 7-ի պատմական որենքն
աջ ոպորտունիստի աչքը ծակում է, վոր այդ որենքը յերբեք
նրան դուր չի գալիս:

6. ՀԱՐՅ. — Ի՞նչ վերաբերմունք ունեն «ձախերը» դեպի
ոգոստոսի 7-ի վորոշումը:

ՊԱՏ. — Գեպի ոգոստոսի 7-ի վորոշումը «ձախերի» ունե-
ցած վերաբերմունքը բնորոշելու համար արժե դատական
պրակտիկայում նկատված «ձախ» տենդենցների մասին միջանի
խոսք ասել: Կան մարդիկ, վորոնք մտածում են մի գրչի հար-
վածով, կամ ավելի շուտ մի հանցագործի նկատմամբ կիրառված
խտապուշն պատժի միջոցով իսպառ վոչնչացնել հանցագոր-
ծության սոցիալ-անտեսական արմատները: Որինակ, մեզանում
պատահել է, վոր դատավորներից վոմանք պահեստից մի վերարկու,
յերկու բլուզ գողացողի նկատմամբ կիրառել են պատժի առավե-
լագույն չափը — գնդակահարություն կամ 10 տարի ազատա-
դրկում: Սա, իհարկե, «ձախություն» է և մեր դատական քաղա-
քականության կոպիտ խեղաթյուրում: Ինչ՞ն համար չի կարելի
հանցագործությունները վերացնել յերկրի յերեսից մի գրչի հար-
վածով: Հանցագործության մարքս-լենինյան տեսությունը
հանցագործության սոցիալ - անտեսական արմատները վորոնում

ե տնտեսական պատճառների, շարժառիթների մեջ և գտնուած ե, վոր հանցագործութիւն ծնող պատճառը՝ մասնավոր սեփականութեան սիստեմն ե, վոր կոմունիստական իրավակարգում, յերբ բոլորովին կվոչնչանա մասնավոր սեփականութիւնը, դրա հետ միասին կվոչնչանա նաև հանցագործութիւնը: Լենինն ասել ե, վոր կոմունիստական իրավակարգում գոյութիւն ունեցող ընդհանուր կարգը խանգարողները կհամարվեն վոչ թե հանցագործներ, այլ աննորմալ մարդիկ, վորոնց իբրև հիվանդների պիտի տեղավորել հոգեբուժական հատուկ տեղերում:

7. ՀԱՐՑ. — Ոգոստոսի 7-ի վորոշման տակ ընկնող ամեն մի հանցագործ պատժվում ե արդյոք գնդակահարութեամբ:

ՊԱՏ. — Ամեն մի հանցագործ, վորի արարքն ընկնում ե ոգոստոսի 7-ի վորոշման ներգործութեան տակ, պատժվելու յե պատժի առավելագոյն չափով — գնդակահարութեամբ: Այդ հիմնական սանկցիայի կողքին՝ ոգոստոսի 7-ի որենքն ունի նաև հետևյալ տրամադրութիւնը. այն ե՝ հանցանքը մեղմացնող բացառիկ պարագաներում թույլատրվում ե հանցագործին յենթարկել տասը տարով ազատազրկման: Նշանակում ե, ոգոստոսի 7-ի վորոշման տակ ընկնող յուրաքանչյուր հանցագործ պատժվում ե կամ գնդակահարութեամբ, կամ տասը տարվա ազատազրկումով, յեթե դատարանը գտնի, վոր գատավճիւր մեղմացնելու հիմունքներ կան գործում:

8. ՀԱՐՑ. — Ինչո՞վ բացատրել, վոր ոգոստոսի 7-ի վորոշումով դատապարտվածը յերբեմն 3 ամսվա կալանքից հետո ազատ ման ե գալիս:

ՊԱՏ. — Մենք վերելի հարցի պատասխանով պարզարանեցինք, թե ոգոստոսի 7-ի որենքով դատապարտվող հանցագործին ինչպիսի խիստ պատիժ ե սպառնում: Լինում են, սակայն, դեպքեր, յերբ ոգոստոսի 7-ի որենքով դատապարտվողների հետ գատի յեն արվում նաև այնպիսի մեղադրյալներ, վորոնց վրա չի տարածվում ոգոստոսի 7-ի որենքի ներգործութիւնը, վորոնց հանցագործութիւնը վորակվում ե տարբեր հոգվածներով:

և դրա համար ել նրանք թեպետ դատի տված են ոգոստոսի 7-ի որենքով հանցավոր ճանաչվողի հետ, բայց և այնպես յենթարկվում են ուրիշ, համեմատաբար մեղմ սոցիալական պաշտպանության միջոցներով: Ձի կարելի ժխտել նաև այն հանգամանքը, վոր լինում են նաև ղեպքեր, յերբ աջ տենդենցները խաղում են իրենց զերը և ոգոստոսի 7-ի վորոշման ներգործության տակ ընկնող հանցագործները չեն կրում իրենց արժանի պատիժը: Անկախ այդ բոլորից, կա նաև մի ուրիշ հանգամանք. այդ այն է, վոր Գերագույն դատարանն ունի հատուկ պարզաբանում՝ ուղղված դատական-դատախազական որդաններին, վորտեղ ասված է, վոր հանրային (սոց.) դուչքի հափշտակման այն գործերը, վորոնց տնտեսական արժեքը կամ հետևանքները ծանր չեն անդրադարձել տվյալ հիմնարկ-ձեռնարկի վրա, չնայած վոր ձեվականորեն ընկնում են ոգոստոսի 7-ի վորոշման տակ, ըստ նպատակահարմարության պետք է քննության առնվեն վոչ թե ոգոստոսի 7-ի վորոշումով, այլ ընդհանուր կարգով, Քրեական որենսգրքի համապատասխան հոդվածների հիման վրա և այդ հոդվածների սանկցիայով նախատեսված սոցիալական պաշտպանության միջոցները կիրառումով:

9. ՀԱՐՑ. — Ձեղծարարների վերաբերմամբ ոգոստոսի 7-ի վորոշումը կիրառվում է, թե վոչ:

ՊԱՏ. — Յեթե զեղծարարության հետևանքով պետական կամ հանրային (սոց.) դուչքին հասնում է զգալի վնաս, ապա նման զեղծարարի նկատմամբ անպայման կիրառվելու յե ոգոստոսի 7-ի որենքը, ինչպես այդ կատարվեց Հայրային Տնտեսության Սարգարաբաղի բաժանմունքի հաշվետարի ու գանձապահի նկատմամբ, վորոնք իրար հետ համաձայնության գալով կատարել էյին մի խոշոր զեղծարարություն, այն է՝ հիմնարկի բյուջեյից խարդախ ճանապարհներով ձեռք էյին բերել 16.000 ուրբուլ մի գումար և շույլել իրենց քեֆի համար: Ղուրդուղուլու ժողգատարանը՝ Գերագույն դատարանի լիազորությամբ՝ լսեց տվյալ գործը և յերկու մեղադրյալներին ել դատապարտեց գնդակահարության:

10. ՀԱՐՑ.—Յեթե գողը, յուրացնողն ու վնասարարը նույն-
քան թշնամի յեն մեզ, վորքան դասակարգային թշնամին, ապա
ինչև առաջինները չեն պատժվում վերջինների հետ հավասար
չափով:

ՊԱՏ.— Այսպիսի հարցադրումը տրամաբանորեն սխալ ե-
ղուրս ե գալիս, վոր իբր թե գողը, յուրացնողն ու վնասա-
րարը դասակարգային թշնամու բանակին սլատկանող ելմենտ-
ներից չեն կարող լինել, վոր իբր թե գողն ու վնասարարը կարող
են լինել միայն բանվորը կամ աշխատավորը. նման դատողու-
թյունը, ինչ խոսք, վոր կլինեք միանգամայն անհեթեթություն,
աբսուրդ: Յեթե տվյալ հարցը կարելի յե ընդունել այն իմաս-
տով, թե ինչև համար աշխատավորը միևնույն հանցանքի
համար ավելի մեղմ պատժի յե յենթարկվում, քան դասակար-
գային թշնամին, ապա այդ հարցին կարելի յե պատասխանել
հետևյալը.— Մեր Քրեական որենսգիրքը հիմնականում բաժան-
վում ե յերկու գլխավոր մասերի. 1) հանցագործություններ
վորոնք ուղղված են խորհ. Միության մեջ բանվորների և գյու-
ղացիների իշխանությամբ հաստատված իրավակարգի դեմ, վորի
հետևանքով ել ճանաչվում են առավելագույն վտանգավոր և
2) բոլոր մնացած հանցանքները: Ինքնբառինքյան հասկանալի յե,
վոր խորհ. իշխանության հիմունքներն ու խորհրդային իրավա-
կարգին սպառնացող հանցագործները մեր դասակարգային թըշ-
նամիները, հակահեղափոխական տարրերն են, վորոնց դեմ պայ-
քարելու համար, հատկապես մատնանշված դեպքերում, վորպես
աշխատավորների պետության պաշտպանության քայտակ մի-
ջոց, կիրառվում ե պատժի առավելագույն չափը—գնդակահա-
րությունը: Կասկած չի կարող լինել այն մասին, վոր հանրային
(սոց.) դուքսի հափշտակողն ու յուրացնողը, թեկուզ նա լինի
աշխատավորական տարր, իրականության մեջ մեր սոց. շինա-
րարությանը հասցնում ե նույն վնասը, ինչ վոր հակահե-
ղափոխականը, հենց զլա համար ոչոսատոսի 7-ի վորոշման ներ-
գործությունը բացի վտասակարգային թշնամիներից և հակա-
հասարակական տարրերից, տարածվում ե նաև աշխատավորների

վրա Իսկ յեթե խոսելու լինենք մեր պատժական քաղաքականութեան մասին ընդհանրապես, ապա վոչ մի կասկած չի կարող լինել այն մասին, վոր խորհ. իշխանութիւնը աշխատավոր հանցադործի նկատմամբ ընդհանուր առմամբ պատժական մեղմ պատիարակչական քաղաքականութիւնն է տանում, և հենց դրա համար ել մեր պատժական քաղաքականութիւնն ուրիշ բան չե, բայց յեթե ուղղիչ աշխատանքային քաղաքականութիւն: Ավելորդ չի լինի բերել այսպեղ բուրժուական իրավագետների մի մասի հայացքները հանցադործութեան ծագման մասին: Որինակ, բուրժուական իրավագետները մի մասը գտնում է, վոր հանցադործութիւնը մարդու մեջ անասական մի ընագղ է, վոր մարդը վորպես կենդանիներից առաջացած մի սերունդ՝ անասուններին հասուկ չարութեան ինչ-վոր գիծ ժառանգաբար պահել է իր մեջ, վորի հետևանքով մերթնդմերթ, չարացած պահին, գործում է հանցադործութիւններ: Մի քիչ ավելի կոպիտ արտահայտված, հանցադործը նմանվում է անասունի Բուրժուական պատժական քաղաքականութիւնը ամենախիստ և ամենադժան վերաբերմունքն ունի դեպի այն հանցադործութիւնները, վորոնք ուղղված են լինում բուրժուական տնտեսութեան հիմքը կազմող մասնավոր սեփականութեան դեմ: Ինչ խոսք, վոր բուրժուական իրավագետի և որենսդրի համար ամենածեռնուտ և ամենահաճելի բանն է իբրև անասուն ներկայացնել թշվառութեան ու կարիքի մեջ տառապող, կոպիտալիստի կողմից շահագործվող ու կեղեքվող այն աշխատավորին: Վորն իր քաղցած փորը կշտացնելու համար խստագույն պատիժը անք առած, իր կյանքը ռիսկի յենթարկելով հանդգնում է կտրղել մասնավոր սեփականութիւնը, իսկ բուրժուադիայի համար աշխատավորին իբրև անասուն տանջելն առանձին հաճույք է. չե՛ վոր իր տիրապետութեան շրջանում նա ունի բոլոր հնարավորութիւնները որենքի ուժով դողանալու աշխատավորից նրա ու նրա ընտանիքի անդամների ճակատի քրտինքը և մնալու անպատիժ:

Մարքս-լենինյան տեսակետից հանցադործութեան սոցիալական արմատները վերջին հաշիով համարվում են տնտեսական

դրդապատճառներն ու կարիքը. ահա թե ինչու խորհրդային պատժական քաղաքականութիւնը մեղմ եւ վարվում դեպի աշխատավորը, յերբ վերջինս կարիքից դրդված կատարում ե այս կամ այն հանցանքը, և ուղղիչ տներում աշխատանքային մեթոդներով ուղղում ե նրան:

11. ՀԱՐՑ. — Լինո՞ւմ են ստաժավոր բանվորներ և կոմունիստներ, վորոնք մասնակցում են սոց. գույքի հափշտակմանը, և յեթե լինում են, ինչո՞վ բացատրել այդ յերևույթը:

ՊԱՏ. — Պատահում ե, վոր ստաժավոր բանվորն ու կոմունիստը մասնակցում ե հանրային սոց. գույքի հափշտակմանը: Այս յերևույթը նախ և առաջ պիտի բացատրել տվյալ բանվորի կամ կուսակցականի անկայունությամբ կամ դասակարգային թշնամու խարդախ դեմագոգիային յենթարկվելու փաստով, վորովհետեւ — ինչպես ընկ. Ստալինն ասել ե «Գյուղի աշխատանքի մասին» արտասանած իր պատմական-ծրագրային ճառում — «կոմունիստները հաճախ վոչ միայն չեն մերկացնում դասակարգային թշնամիներին, այլ ընդհակառակը, իրենք են յենթարկվում նրանց խարդախ դեմագոգիային, գնում են նրանց պոչից»:

12. ՀԱՐՑ. — Պատասխանատու կոմունիստը կարո՞ղ ե ընկնել ոգոստոսի 7-ի վորոշման տակ:

ՊԱՏ. — Այն կոմունիստը, լինի նրա պատասխանատու կամ շարքային, վորը կենթարկվի դասակարգային թշնամու դեմագոգիային և կմասնակցի հանրային (սոց.) գույքի հափշտակմանը, առաջին հերթին կղատապարտվի ոգոստոսի 7-ի վորոշումով, վորովհետեւ հեղափոխական որինականութիւնը պահանջում ե, վոր խորհրդային որենքները վտանահարողը, անկախ իր կոչումից և դիրքից, համապատասխան պատժի յենթարկվի:

13. ՀԱՐՑ. — Լինո՞ւմ են դեպքեր, յերբ հիմնարկի պետերը հովանավորում են փաստարարներին:

ՊԱՏ. — Վնասարարներին հովանավորել՝ նշանակում ե մասնակցել փաստարարութեանը, իսկ մեր որենքներով հանցագործին

վորեւ կերպ ոժանդակելը հավասար և տվյալ հանցագործութիւնը կատարելուն: Նման դեպքերում ոժանդակողը պատժվում և այնպես, ինչպես խոկական և անմիջական հանցագործը: Մեղանում Գեր. դատարանի դատական կոլեգիան, վորը զբաղվում և ոգոստոսի 7-ի վորոշման տակ ընկնող գործերի դատաքննութեամբ, թեև մինչև հիմա չի արձանագրել այնպիսի դեպք, յերբ հիմնարկի պետը հովանավորած լինի հիմնարկի ֆուստարբին, բայց և այնպես այդ հանգամանքը չի կարող յերաշխիք լինել, վոր աստատարակ մեզ մոտ չի կարող նման դեպք տեղի ունենալ: Անհրաժեշտ և հեղափոխական աշարջութեամբ մերկացնել նման դեկավարներին և ամենախիստ պատասխանատվութեան յենթարկել նրանց:

14. ՀԱՐՅ. — Պլանների թերակատարումը նշանակում և խախտել ոգոստոսի 7-ի որենքը:

ՊԱՏ. — Յուրաքանչյուր հիմնարկ-ձեռնարկի, գործարանի կամ կոլեկտիվ տնտեսութեան պլանի թերակատարումը խոշոր հարված և հասցնում մեր սոց. շինարարութեանը: Ամենուրեք, վորտեղ կուսակցական ճիշտ դեկավարութիւնն ապահովված և և բանվորն ու աշխատավորն անցել են աշխատանքի սոցիալիստական ձեւերին—սոցմրցման ու հարվածայնութեան, այնտեղ, վորտեղ կիրառում են առաջնորդի պատմական 6 ցուցումները՝ արատազրութեան և տնտեսութեան մեջ, իհարկեւ, պլանները կատարվում և գերակատարվում են: Ընդհակառակը, այնտեղ, վորտեղ չեն դիտարկում բանվորի և աշխատավորի աշխատանքային անսպառ յեռանդն ու նախաձեռնութիւնը, վորտեղ աշխատանքները մատնված են ինքնահոսի, դիրեկցիայի կամ վարչութեան անգործունեութեան, անտնտեսավարութեան հետեանքով, այնտեղ պլանների կատարման մասին խոսք անգամ լինել չի կարող: Անտնտեսավարութեան և դեպի պետութեան դուրքը անբարեխիղճ վերաբերմունք ցուցաբերելու կոնկրետ որինակ են Զակագոստորդի Մարգարայի բաժանմունքի վարիչի և ավագ հովիի գործերը: Այստեղ պատասխանատվութեան գիտակցութեան կատարյալ բացակայութիւն և անգործութիւն և տիրել, դեպի

հանրային պետական գույքը յեղել և կազմունի-չինովնիկական մոտեցում, վորի հետևանքով հիմնարկի բազմաթիվ խոշոր և մանր յեղչյուրավոր անասունները թալանի ու վատնման են յենթարկվել: Հարց և առաջանում. ի՞նչ վերաբերմունք կարող և ցույց տալ խորհրդային արդարադատությունը թշնամու գործը լրացնող անփուլթ, անտնտեսավար և անբարեխիղճ հիմնարկի վարչի ու նրա ոգնական ավագ հովվի նկատմամբ. մի՞թե նմանները համար չե ոգոստոսի 7-ի որենքը: Դատական կոլեգիան միանգամայն տեղին և արդարացի կերպով յերկու մեղադրյալներին ել մեղավոր ճանաչեց ոգոստոսի 7-ի որենքի մեղադրանքով և նրանց դատապարտեց տասական տարով ազատազրկման:

15. ՀԱՐՅ. — Ոգոստոսի 7-ի ներգործության տակ ընկնող կոմունիստը կարո՞ղ և մնալ կուսակցության մեջ:

ՊԱՏ. — Այս հարցին, թե ոգոստոսի 7-ի վորոշման ներգործության տակ ընկնող կոմունիստը կարող և մնալ կուսակցության մեջ, պատասխանում և կենտկոմի հետևյալ պարզ ու կտրուկ դիրեկտիվը. — «Կուսակցական ամենախիստ պատասխանատվության յենթարկել և դատի հանձնել այն կուսակցականներին և ԼԿՅՅՄ-ի անդամներին, վորոնք մերկացվում են հանրային գույքի հափշտակման, վատնումի կամ յուրացման մեջ և կամ վորոնք կորցնելով իրենց դասակարգային գգոնությունը, վախկոտությամբ խմբակային-ընտանեկան նկատառումներով կամ հանցավոր անփութությամբ հեշտացնում են հափշտակողներին և վատնողներին փաստարար գործը, չեն մերկացնում իրենց ապարատում գոյություն ունեցող հիվանդոտ յերևույթները կամ ճնշում են առողջ ինքնաքննադատությունը: Այս դիրեկտիվից յերևում և, վոր ոգոստոսի 7-ի որենքը խախտող կոմունիստը վոչ միայն կուսակցության մեջ մնալ չի կարող, այլ և կհանձնրվի դատի, իր արժանի պատիժն ստանալու համար:

16. ՀԱՐՅ. — Ի՞նչո՞ւ այժմ ավելի խիստ պայքար և տարվում պետ. գույքի հափշտակողները դեմ:

ՊԱՏ. — Այժմ իրոք ավելի խիստ պայքար և տարվում պե-

տական գույքը հափշտակողներէ դեմ, յերբ մենք հաշտութիւնսմը կյանքում կիրառեցինք կուսակցութեան առաջադրած լոզունգը՝ կուլակութունն իրրև դասակարգ լիկլիդացիայի յենթարկելու մասին: Շատ շատերին թվում եր, թե յերկրորդ հնգամյակի առաջին տարում մենք այլևս կուլակ ու վնասարար չենք ունենա, վոր դասակարգային պայքարի մասին այլևս խոսելու կարիք չի լինի և այլն և այլն: Նման ուղարտունիստական և մեր հեղափոխական զգոնութիւնը բթացնել փորձող տենդենցներէ դեմ դեռևս հունվարյան պլենումում իր ջախջախիչ յելուցթով հանդես յեկա՞վ մեր առաջնորդ ընկ. Ստալինը, ահագանդելով, վոր «կուլակները թեպետ ջախջախիւել են, սակայն դեռ հեռու յեն վոչնչացո՞ված լինելուց» և իրոք վոր դասակարգային թշնամին քաջ համողված լինելով, վոր հանրային (սոց.) գույքը խորհրդային տնտեսութեան հիմքն և կազմում, փոխելով իր գույնն ու պայքարի մեթոդները, խցկվեց կռիւող-սովխոգներում, զանազան հիմնարկ-ձեռնարկներում, անգամ արդյունաբերական վայրերում, սկսեց տանել իր կազմալուծիչ սև աշխատանքը. նա սխառեմատիկ, ամենորյա պայքար սկսեց հանրային (սոց.) գույքի դեմ թալանելով, հափշտակելով ու յուրացնելով այն: Ի՞նչ խոսք, վոր նման դրութիւնը պետք և հաշվի առնվեր մեր իշխանութեան բարձր որդանների կողմից և համապատասխան պայքարի ձեռնարկվեր նման հանցագործների դեմ: Յե՞վ ահա այդ պայքարի ձևերից մեկը հանդիսանում և ոգոստոսի 7-ի որենքը, վոր խոստագույն պատիժ և սահմանում նրան, ով կհամարձակվի ձեռք մեկնել պետական, հանրային (սոց.) գույքին:

17. ՀԱՐՅ. — Հանրային գույքի հափշտակման և վատնման քանի՞ դեպք և հայտարարվել մեղանում ոգոստոսի 7-ի որենքը հրապարակումից հետո և ի՞նչ միջոցներ են ձեռք սունված:

ՊՍՏ. — ՀՄԽՀ Գերագույն Գատարանի դատական կոլեգիայի և ժողգատարանների կողմից 1932 թվի ոգոստոսից մինչև 1932 թվի հուլիսը քննութեան և առնված ոգոստոսի 7-ի վորոշման ներգործութեան տակ ընկնող ընդամենը 86 գործ, վորոնցով մեղադրվել են 217 հանցագործներ: Տասը տարվա ազատա-

զրկման յենթարկվածները թիվը միայն՝ 130 հոգի յե, բացի այդ կան նաև պատժի առավելագույն չափի—գնդակահարության յենթարկվածներ, մնացած հանցագործները յենթարկված են 2—3 տարով ազատազրկման և սոց. պաշտպանության այլ միջոցները։ Հարց կարող ե առաջանալ, թե ինչու համար հիշյալ հանցագործների նկատմամբ ավելի մեղմ պատիժ ե կիրառված։ Թյուրիմացության տեղիք չտալու համար անհրաժեշտ ե հիշեցնել, վոր հաճախ դատական պրոցեսում նոր հանդամանքների յերևան գալու հետևանքով պատահում ե, վոր հանցագործության վորակը փոխվում ե մեղադրյալներից միջանիսի նկատմամբ և միևնույն գործով մեղադրական աթոռի վրա նստողներից վոչ-քոլորը պատժվում են ոգոստոսի 7-ի որհնքի տրամադրությամբ։ Այլապես, որինականության խոշոր խախտում կլիներ, յեթե ոգոստոսի 7-ի վորոշման ներգործության սակ ընկնող հանցագործը դատապարտվեր գնդակահարությունից կամ 10 տարվա ազատազրկումից պակաս սոց. պաշտպանության (պատժի) միջոցի։

Հետաքրքիր կլիներ մեջ բերել ոգոստոս 7-ի վորոշման առնչությամբ քննված գործերի քանակը՝ ըստ հափշտակված գույքի տեսակի և դատապարտվածների թվի։

№ №	ՀԱՓՇՏԱԿՎԱՆ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿԸ	Գործերի քանակը	Դատապարտվածների թիվը
1	Արդյունարերական	5	10
2	Պորհանտեսային	7	18
3	Պետ. առևտրական վտտն. և յուրաց.	21	33
4	Կոլանտեսային	39	112
5	Կոսպերատիվային	9	29
6	Տրանսպորտային	2	4
7	Ազունավարձի վատնում	2	3
8	Տրակտորների փչացում	1	2
ԸՆԴԱՄԵՆԸ .		86	217

Դատապարտվածները, ըստ նրանց պատճառների յեվ ժողովրդական
սնկեստւթյան նյութերի

Ա.Ն. ըստ կարգի	Ժողովրդական անտեսութեան ճյուղը	Պաներ, վարդեր, նիւսիստիկաներ	Հարշտիտարներ	Գանձապահներ	Պանեստապահներ	Պահակներ	Ձիտարներ	Տրակտորիստներ	Քարայրներ	Պատահականներ	Մեղքեխոյսեր	Այլ ծառայողներ	Գործարարներ	Ընդամենը
1	Հիմնարկ-ձեռնարկ . . .	7	5	2	4	—	—	—	—	—	—	20	—	38
2	Կոսպերատիվ	5	1	—	—	1	—	—	—	10	1	—	—	18
3	Կոլտնտեսականներ . .	14	3	—	9	—	—	2	6	—	—	16	1	51
	Ընդամենը .	26	9	2	13	1	—	2	6	10	1	36	1	107

18845

Այս տարի միայն, Յերևանի Միացյալ Ժողովատարանում, Գերագույն Դատարանի լիազորութեան կարգով, սղոստտի 7-ի վորտչման սանկցիւայով լսված են 8-ը գործեր, վորոնցով պետական գույքին հասել և միաս, ըստ հետևյալ աղյուսակի.—

Հիմնարկի անունը

Վնասի չափը

1. Հայտնարկատ	2000 ո.
2. Հրշեջխումբ . . .	5060 „
3. Կարի գործարան . . .	6120 „
4. Հաշմկոտ. միութիւն . . .	3331 „
5. Լեռնային տեխնիկում . . .	7054 „
6. Գրական . . .	6708 „



Ընդամենը . 30.323 ո.

38332

Այս աղյուսակի մեջ, ինչպես յերևում է, չեն մտնում Հացի գործարանից կատարված հացի հափշտակումը և այլ մանր 1-2 դեպքերը, վորով ընդհանուր վնասի չափը հասնում է մոտ 40.000 ոսկւրու:

Վերը հիշված գործերով դատի տրված են 17 հանցագործներ, վորոնցից 9-ը դատապարտված են 10-ական տարով ազատագրվման:

18. ՀԱՐՑ. — Վճր հիմնարկում համեմատաբար շատ են տեղի ունեցել ոգոստոսի 7-ի վորոշումով հանցադործությունները:

ՊԱՏ. — Ինչպես յերևում է վերեի աղյուսակից, ոգոստոսի 7-ի վորոշումով հանցադործությունները համեմատաբար ավելի շատ են տեղի ունեցել ժողովրդական տնտեսության հետևյալ ճյուղերում. — 1) կոլտնտեսություններում (39), 2) պետ-առևտրական հիմնարկ-ձեռնարկներում (21) և 3) կոոպերատիվներում (9):

19. ՀԱՐՑ. — Ինչ՞ով ոգոստոսի 7-ի գործերի քննությունը յերբեմն ձգձգվում է դատական որդաններում, վերադաս որդաններն ի՞նչ միջոցներ են ձեռք առել այդ ուղղությամբ:

ՊԱՏ. — Ոգոստոսի 7-ի վորոշումով լավելիք գործերի ավարտման միջին տևողությունը վերադաս որդանների կողմից սահմանված է 15 որ: Բացառիկ գործերով միայն, յերբ գործի բարդության պատճառով յերկարատե քննության կարիք է զգացվում, այդ ժամկետը թույլատրվում է հասցնել մինչև 30 որվա Իրականության մեջ, սակայն, այս ժամկետները հաճախ խախտվում են դատաքննչական ապարատի գործողությունների քաշքըջման հետևանքով: Որինակ՝ Գեր. դատարանի դատական կոլեգիայում, նաև Յերևանի Միացյալ ժողգատարանում այդ քննութի գործերի միջին տևողությունը յեղել է 34 որ: Յերբաղկումը դտնելով այդ քաշքըջուկը միանգամայն անթույլատրելի, դիրեկտիվ տվեց հանրային - պետական գույքի հափշտակման գործերն ավարտել 10 որվա ընթացքում հաշված այդ գործի դատարան մտած որից: Նման գործերը պիտի լավեն հիմնարկ-ձեռնարկներում, բանվորական կոլեկտիվներում՝ ցուցադրական կարգով:

20. ՀԱՐՑ. — Բացի հանրային (սոց.) գույքի հափշտակումից ուրիշ ի՞նչպիսի հանցադործություններ են ընկնում ոգոստոսի 7-ի վորոշման տակ:

ՊԱՏ. — Ինչպես վոր հանրային (սոց.) գույքի հափշտակման, յուրացման և վատնումի հանցադործություններն ընկնում են

ողոստոսի 7-ի վորոշման ներգործութեան տակ, այնպես ել դեպի հանրային բույրի պահպանումն անփութ, անբարեխիղճ և անտնտեսավար վերաբերմունք ցուցց տալու հետևանքով հիմնարկ-ձեռնարկներին կամ կոլտնտեսութեաններին վնաս պատճառող, կամ նման հանցավոր անփութութեամբ ու անտնտեսավարութեամբ հանրային (սոց.) գույքի թալանելուն ու հափշտակման տեղիք տվող հիմնարկ-ձեռնարկի պետերն ու տնտեսավարները կպատժվեն օղոստոսի 7-ի որենքի սանկցիայով՝ համաձայն ՍՍՀՄ-Կենտգործկոմի 1933 թ. մարտի 27-ի վորոշման, վորտեղ ասված է հետևյալը՝ «1932 թ. օղոստոսի 7-ի որենքը կիրառել նաև տնտեսավարների նկատմամբ այն դեպքերում, յերբ նրանք ակնհայտ կերպով անհրաժեշտ միջոցներ չեն ձեռք առել պահպանելու սոցիալիստական գույքը»:

21. ՀԱՐՑ.— Մեր գործարաններում հաճախ ինվենտարը, մեքենաները, գործիքները և այլն բացթյա յեն մնում, փչացման յենթակա վիճակում. արդյոք սա չի՞ համարվում հանրային գույքի պահպանութեան համար ՍՍՀՄ-ի Կենտգործկոմի 1932 թ. մարտի 27-ի գիրեկտիվի խախտումը:

ՊԱՏ.— Անկասկած հանրային (սոց.) գույքի պահպանութեան որենքի խախտում պիտի համարել այն դեպքերը, յերբ մեր գործարաններում, հիմնարկ-ձեռնարկներում, տրանսպորտում և կոլտնտեսութեաններում մեքենաները, գործիքներն ու ինվենտարը շատ անգամ թափթփված ու անտերութեան մատնըված վիճակում ընկած են մնում դաշտում, ճանապարհին, հիմնարկութեան բակում բացթյա, կամ հիմնարկութեան պահեստում անխնամ, ժանգոտած և փչացման յենթակա դրութեան մեջ: Թե քաղաքում և թե գյուղում նման դեպքեր հայտնաբերելիս անպայման պիտի բողոքել և իրազեկ անել հսկող որդաններին, այն ե՞՞ դատախազութեան, ԲԳՏ-ին կամ նրանց ոժանդակող սեկցիաներին, վորպեսզի մեղավորները յենթարկվեն դատական պատասխանատվութեան:

22. ՀԱՐՑ.— Ուղոստոսի 7-ի վորոշումն ի՞նչ հետևանք ունեցավ:

ՊԱՏ. — Միանգամայն սխալ կլինեն պաշտպանել այն «ձախ» տեսակետը, թե խիստ որենքներով միայն հնարավոր կլինի հանցագործութիւնը վերացնել, քանի դեռ մեր ժողովրդական տնտեսութեան մեջ կան մասնավոր սեփականատիրութեան մնացորդներ: Միայն կարելի յե մասնանշել այն հանգամանքը, վոր ոգոստոսի 7-ի պատմական վորոշումը, վորպես ժամանակին հրատարակված որենք, ունեցավ այն քաղաքական խոշոր նշանակութիւնը, վոր բոլորի մեջ արմատացավ հանրային գույքի սրբազան և անձեռնմխելի լինելու գիտակցութիւնը, դասակարգային պայքարի սրված պայմաններում միասարար և հափշտակող թշնամիներն ստացան իրենց արժանի պատիժը: Սակայն յենթադրել, թե մենք կաբողանում ենք բոլոր ղեպքերում դասակարգային թշնամու և նրա գործակալութեան յուրաքանչյուր վտոնձգութիւնը ժամանակին արմատախիլ անել — դա կլինեն ինքնախաբեյութիւն, վորովհետև շատ անգամ մեր վորոշողակներում, հանրային գույքի պահպանման և դասակարգային թշնամու մերկացման դործում անհրաժեշտ հեղափոխական զգոնութիւնը չի հայտնաբերվում, նոր ղիմակի տակ, նորագույն մեթոդներով պայքարող հանցագործ-թշնամուն տեղի ու տեղը մերկացնելու և խորհ. արդարադատութեան կամ այլ համապատասխան որդանների ձեռքը հանձնելու համար: Յեկնելով դրանից, պետք է խոստովանել, վոր դեռ շատ անելիքներ ունենք այս ասպարեզում, վորպեսզի անհրաժեշտ հեղափոխական զգոնութեան միջոցով կարողանանք համապատասխան պայքար ծավալել հանրային գույքի հափշտակման դեմ:

23. ՀԱՐՅ. — Յեռ, իբրև անկուսակցական, իրավունք ունիմ հայտնաբերելու ոգոստոսի 7-ի վորոշման տակ ընկնող կամուներխաին:

ՊԱՏ. — Յուրաքանչյուր կուսակցական, ԼԿՅՍ-ի անդամ և անկուսակցական բանվոր, ծառայող կամ գյուղացի վոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է հայտնաբերել ոգոստոսի 7-ի տակ ընկնող հանցագործին, լինի նա կոմունիստ կամ պատասխանատու աշխատող:

24. ՀԱՐՑ. — Խոշոր գեղծարարութիւնը հայտնաբերողներին կատարած գործադրվող հալածանքի դեմ պաշտպանութեան ինչ յերաշխիքներ կան:

ՊԱՏ. — Վորոշ մարդկանց մտավախութիւնն այն մասին, վոր խոշոր գեղծարարութիւնը հայտնաբերելուց հետո իրենց դեմ կարող ե հալածանք սկսվել և իրենք կարող են կուլ գնալ, վոշ մի քննադատութեան չի գիմանում: Ի դեպ՝ պիտի մատնանշել, վոր նման մտավախութեան տենդինց առաջացել էր վորոշ անհատներին մեջ, յերբ առաջին անգամ կուսակցութեան կողմից սուր կերպով գրվից ինքնաքննադատութեան լոզունգը, վորպես կուսակցական ու պետական շինարարութեան մեջ գոյութիւն ունեցող թերութիւնները հայտնաբերելու և վերացնելու միջոց: Ինքնաքննադատութեան լոզունգը լիովին արդարացրեց իրեն. խորհ. մամուլը դարձավ ինքնաքննադատութեան պայքարի հզոր ազդակը. վորի միջոցով ակտիվ բանգլուղ-թղթակիցներն իրենց աւարյա թղթակցութիւններով անվախ կերպով անագանդում են նկատված ձգձգման, բյուրոկրատիզմի, հանրային (սոց.) դուքի համըտակման ու յուրացման դեպքերը:

Նման առողջ ինքնաքննադատութիւնը, ինչ խոսք, վոր պիտի առողջացնէր մեր հիմնարկ-ձեռնարկներում յերբեմն նկատվող վատառողջ ու հիվանդագին-բյուրոկրատական յերևույթները: Դասակարգային թշնամին իր դասակարգային հոտառութեամբ ժամանակին զգալով այդ, իսկույն պայքարի դուրս յեկավ ինքնաքննադատութեան լոզունգի դեմ և սկսեց հալածանք, մինչև անգամ տեռոր գործադրեց ակտիվ թղթակիցների դեմ: Արձանագրված են բազմաթիւ վաստեր, յերբ վորոշ հիմնարկ-ձեռնարկների պետերն անգամ առողջ ինքնաքննադատութեան յենթարկվելիս չեն հանդուրժել այդ և կամ արժանապատուութեան վիրավորումից թելադրված՝ թերագնահատել են առողջ ինքնաքննադատութիւնը և ուղղակի ու անուղղակի հալածանք են սկսել քննադատողների դեմ: Այս բոլորի կողքին արձանագրված են և մենք ականատես ենք յեղել այն բազմաթիւ վաստերին, յերբ թրղթակցին ու քննադատողին հալածող հիմնարկ-ձեռնարկի պետերը

ևս նստել են մեղադրական ավտոի վրա իբրև ինքնաքննադատությունը ճնշողներ, քանի վոր մեր որենսզրքով նման դեպքերը հետապնդվում են Գր. որենսզրքում նախատեսնված հատուկ հոգվածներով:

Սորհ. իշխանության կողմից առողջ ինքնաքննադատությունը ճնշողների նկատմամբ նման խիստ միջոցներ ձեռք առնելովելուց հետո, մեր կարծիքով, միանգամայն անտեղի յե նորանոր յերաշխիքներ ու ապահովություն պահանջել այն մարդկանց նկատմամբ, վորոնք խոշոր զեղծարարությունը հայտնաբերելուց հետո հանցագործի կողմից կարող են յենթարկվել հալածանքի, հետևաբար, նման մտավախությունը միանգամայն անտեղի յե և հետևանք քաղաքացիական արիության պակասի:

25. ՀԱՐՑ. — Հանրային գույքի հափշտակման դեմ, բացի պատժական միջոցներից, պայքարի ուրիշ ի՞նչ միջոցներ կան:

ՊԱՏ. — Յեթե հանրային (սոց.) գույքի հափշտակումը կատարված փաստ է, պատժական միջոցներից բացի պայքարի ուրիշ և վոչ մի միջոց կիրառելի չե հանցագործների նկատմամբ, քանի վոր հանրային (սոց.) գույքի հափշտակման դեպքերի համար մենք ունենք ոգոստոսի 7-ի վորոշումը, իսկ այդ վորոշումով նախատեսնված պատիժը բոլորի համար պարզ է:

26. ՀԱՐՑ. — Հանրային գույքի հափշտակումները կանխելու ի՞նչ միջոցներ կան:

ՊԱՏ. Նախ՝ հիմնական միջոցը ոգոստոսի 7-ի վորոշումն է. բացի դրանից; հանրային (սոց.) գույքի հափշտակումները կանխելու համար կան հետևյալ միջոցները՝ Սոսենք որինսակով. ժող. դատարաններում և դատական կոլեգիայում մտած ոգոստոսի 7-ի տակ ընկնող մի շարք գործերի քննությունից պարզվել է, վոր մի շարք հիմնարկ-ձեռնարկությունների պետերն ու տնտեսավարները դեպի հանրային գույքը հանցավոր անխելություն և անտնտեսավար վերաբերմունք ցուցաբերելով, անուղղակի նպաստել են հանրային գույքի հափշտակման գործին: Որինսակ, Յերևանի Հացի գործարանից գո-

զացվել եր մոտ 2 տոնն հաց, դողը ձերբակալվեց և ստացալ իր արժանի պատիժը. բայց դորձի դատաքննութեան ընթացքում պարզվեց, վոր հանրային գուքի հափշտակման անուղղակի տեղիք տվողը յեղել և հենց ինքը՝ զիրեկցիան: Ահա թե ինչպես, զիրեկցիան Հացի գործարանում կանալիզացիայի աշխատանքների ժամանակ գործարանի տակից բաց և արել մի անցք, վորտեղից զբսի մարդը փողոցից հեշտութեամբ կարող եր մտնել գործարան. ահա այդ անցքը փոխանակ ժամանակին փակելու, բաց և թողնվում, վորտեղից գիշերով հանցագործը ներս սողակելով կատարում և հացի գողութունը: Մի ուրիշ հիմնարկի պահեստի լուսամուտից 2—3 անգամ գուքի հափշտակում և տեղի ունենում հենց միևնույն տեղից և յերանկի հիմնարկատեար, վորը գուցե և տնտեսավար կոչվելու պատիժն էլ ունի, չի մտահոգվում այդ լուսամուտի խախուռ դրութեանը վերացնելու մասին: Հանրային գուքի հափշտակմանը տեղիք տվող այս և նման հանցագործ, անբարեխիղճ ու անտնտեսավար վերաբեմունքն աչքի առաջ ունենալով եր, վոր վերադաս որդանների կողմից ոգոստոսի 7-ի որևնքը լրացրվեց ս.թ. մարտի 27-ի զիրեկտիվով տնտեսավարների նկատմամբ, վորի մասին մենք հիշատակեցինք վերևում 20-րդ հարցին պատասխանելիս:

27. ՀԱՐՅ. — Ի՞նչպիսի պայքար պետք և մղեն կոմունիստներն ու ԼԿՅՆՄ անդամները հիմնարկ-ձեռնարկներում հանրային գուքի հափշտակման դեմ:

ՊԱՏ. — Կոմունիստների և ԼԿՅՆՄ անդամների առաջնակարգ պարտականությունն և հսկողությունն ունենալ հիմնարկ-ձեռնարկի և կոլեկտիվ տնտեսութեան պատկանող հանրային գուքի պահպանութեան վրա: Նրանք պետք և ակտիվ պայքար մղեն հափշտակումները կանխելու և հանրային գուքի պահպանութեան մասին հող տանելու համար: Այդ կարևոր և պատասխանատու գործում կոմունիստին և ԼԿՅՆՄ-ի անդամին ամենից առաջ հարկավոր և ունենալ, ինչպես ասել և մեր սիրելի առաջնորդ ընկ. Ստալինը— ևնդալիտիսական գգոնություն: Հիմնարկ-ձեռնարկում և կոլեկտիվ տնտեսութեան մեջ կոմունիստն ու

ՀԿՅԵՄ անդամը, հանրային գույքը համարելով իրենց սեփականութունը, պետք է պահպանեն այն իրենց աչքի լույսի պես, հանրային սեփականութունը պաշտպանելու համար պայքարի հանեն անկուսակցական ակտիվը; ունենան զասակարգային հեղափոխական հոտառութուն, վորպեսզի հիմնարկ-ձեռնարկներում և կոլեկտիվ տնտեսության մեջ՝ կանխելով հանրային գույքի հափշտակումն ու վատնումը, կանխելով պլանների թերակատարումը, տեղն ու տեղը հայտնաբերեն և մերկացնեն զասակարգային թշնամու—կուլակի և նրա քաղաքական ազենտուրայի այն բոլոր մանկլրները, վորոնցով նրանք կփորձեն վնաս հասցնել հանրային (սոց.) գույքին հափշտակումներով և այլ վնասարար գործողութուններով: Նկատի ունենալով, վոր միջանի հանցազործներին տրված լստագույն պատիժը զեռ վոչնչով չի կարող փրկել այն դրութունը; յերբ տվյալ հանցազործության հետևանքով հաճախ խոշոր վնաս է հասնում մեր սոց. շինարարության, ուստի անհրաժեշտ է հանցազործության առաջն առնել, չթողնել, վոր հանրային գույքի հափշտակումով մեծագույն վնաս հասցվի սոց. շինարարության, և վոր թե այդ բոլորը կատարվելուց հետո միայն պատժական միջոցների մասին մտածել: Պետք է աչքի առաջ ունենալ նաև այն հանգամանքները, վոր պատժական-դատական լեզվով ասած, սոցիալական պաշտպանության միջոցները, վերջիվերջո, ուրիշ նպատակի չեն ծառայում, քայց յեթե 1) արդեն իսկ հանցանք գործած մարդկանց կողմից նոր հանցանք գործելու առաջն առնելու, 2) հասարակության ուրիշ անկայուն տարրերի վրա ազդեցութուն թողնելու և 3) հանցազործներին խորհրդային քաղաքացուն վայել կենցաղի պայմաններին սովոր դարձնելու:

28. ՀԱՐՑ. — Հանրային գույքի հափշտակման դեմ մղվող պայքարն արդյոք տարբեր է կոլտնտեսության մեջ և գործարաններում:

ՊՍՏ. — Հանրային գույքի հափշտակման դեմ մղվող պայքարը հիմնականում միևնույնն է թե գործարանում և թե կոլտնտեսության մեջ. այստեղ խոսք կարող է լինել միայն պայքարի ձևերի

մասին, հիմք ունենալով արտադրական տարբեր պրոցեսները: Այժմ տեսնենք, թե ինչից և ըզխում այստեղ պայքարի ձևերի տարբերութիւնը (խոսքը պայքարի ձևական-տեխնիկական կողմի մասին է): Մեր գործարանն իր մեքենաներով ու ինվենտարով, իր արտադրութեան միջոցներով ամփոփ մի հիմնարկ է, վորտեղ բանվորների և կուսակազմերի հսկողութիւնից բացի, հաճախ հատուկ պահակների հսկողութիւնն ապահովված է: Նույնը չի կարելի ասել կուլեկտիվ տնտեսութեան համար, քանի վոր կուտնտեսութեան գույքն ու ինվենտարը ցրված դրութեան մեջ է գտնվում. այստեղ, թիւում է, թե ավելի դժվարանում է սոց. գույքի պահպանութեան գործը: Ահա այս տեսակետից ել պիտի յեզրակացնել, վոր հանրային գույքի հափշտակման ու փաստարարութեան դեմ գործարանում և կուտնտեսութեան մեջ մղվող պայքարի ձևերը կարող են տարբեր լինել: Յեթե կուտնտեսութեան յուրաքանչյուր անգամ զբաղվի միայն աշխոր ձեռք բերելու գործով, յեթե յուրաքանչյուր կուտնտեսական սոց. գույքի պահպանմանը չհսկի արթուն պահակի նման, պարզ է, վոր դասակարգային թշնամու համար ավելի հեշտ կլինի կուտնտեսութեան գույքի նկատմամբ կատարել իր սե գործը, քան թե գործարանի, վորտեղ համեմատաբար ավելի կենտրոնացած պայքարի ձևեր և միջոցներ գոյութիւն ունեն: Մյուս կողմից, այս հանգամանքը չպետք է արխային գարձնի բանվորներին, յերբնոր դիմակ հագած դասակարգային թշնամին, հաճախ բանվորի կերպարանքով, խցկվելով գործարան, բանվորի կողքին վորպէս բանվոր աշխատելով, և կամ թե խորհրդային մասնագետի դիմակի տակ, ծանոթանում է գործարանի ներքին կյանքին ու պայմաններին, և շատ անգամ ավելի նուրբ ձևերով փնաս է հասցնում սոցիալիստական արդյունաբերութեանը՝ կազմակերպելով փնասարարութիւն:

29. ՀԱՐՑ. — Արդոք նպատակահարմար չի՞ լինի գործարանում և կուտնտեսութեան մեջ կազմակերպել հանրային գույքի հափշտակման դեմ պայքարող հատուկ բրիգադաներ:

ՊԱՏ. — Կուտնտեսութեան մեջ, և թե գործարանում յուրաքանչյուր բանվորի և աշխատավոր գյուղացու առաջնակարգ

պարտականութիւնն ե հսկել, վորպեսզի հանրային գուշքը չհասփշտակվի և նրա պահպանութեան համար դիրեկցիան ու վարչութիւնները համապատասխան միջոցներ ձեռք առնեն: Բացի այդ, պիտի մատնանշել, վոր թե կոլտնտեսութեան մեջ և թե գործարաններում նման ֆունկցիաներ ունեցող մի քանի «բրիգադաներ» արդեն կազմակերպված են: Գյուղերում կոլտնտեսութեան կից կազմակերպված ե դատախազութեան ոժանդակող խմբակ, իսկ գյուղխորհրդին կից գոյութիւն ունի ԲԳՏ-ի սեկցիա: Շուտով գյուղխորհուրդներին կից կունենանք հեղափոխական որինականութիւնը խախտողները դեմ պայքարող սեկցիաներ: Գործարաններում նույնպես գոյութիւն ունեն դատախազութեան ոժանդակող խմբակներ: Այս բոլոր որգանները փաստորեն բրիգադներ են, վորոնք կոչված են առաջին հերթին հսկել հեղ. որինականութեան պահպանման վրա, իսկ հեղ. սրինականութեան ամենասուր ծայրը գյուղում և քաղաքում ուղղված ե դասակարգային թշնամու և նրա ագենտուրայի կողմից հանրային գուշքի վերաբերմամբ կատարված կամ կատարվելիք հանցագործութիւնները և վտնածութիւնները դեմ: Հիշյալ սեկցիաներն ու խմբակները պարտավոր են համերաշխ գործակցութեան մեջ մտնել գոյութիւն ունեցող ակտիվի, գյուղխորհրդի, կոլվարչութեան և գործարանի դիրեկցիայի հետ իրենց պարտականութիւնը հաշտութեամբ կատարելու գործն աշահովելու համար:

Այս խմբակների և սեկցիաների գոյութիւնն առ այժմ ավելորդ ե դարձնում գործարաններում և կոլտնտեսութիւններում ունենալ հանրային գուշքի հափշտակման դեմ պայքարող առանձին բրիգադներ, քանի վոր, ինչպես շեշտեցինք վերևում, հիշված սեկցիաներն ու խմբակները պարտականութիւն ունեն հսկելու հանրային գուշքի պահպանման գործի վրա, հափշտակումների, վատնումների և յուրացումների առաջն առնելու, իսկ հանցագործութիւնը կատարվելու դեպքում՝ անհապառակ համապատասխան որգաններին:

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՐԵԿՈՄԻ ՅԵՎ ԺՈՂ.ԿԳՄԽՈՐՀԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՊԵՏԱԿԱՆ ԶԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ
ԿՈՊՊԵՐԱՅԻԱՅԻ ԳՈՒՅՔԸ ՊԱՇՊԱՆԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ (ՍՈՑԻԱ-
ԼԻՍԱԿԱՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՄՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վերջին ժամանակներս հաճախակի յեն դարձել բանվորների և կուլանտեսականների բողոքները խուլիզանական և ընդհանրապես հակահասարակական ելեմենտների կողմից յերկաթուղային և ջրային տրանսպորտում բեռների հափշտակության (զողության) և կոոպերատիվային ու կուլանտեսային գույքի հափշտակության (զողության) վերաբերյալ: Հաճախակի յեն դարձել նաև բողոքները կուլանտեսությունից դուրս գալ չցանկացող և նրանց ամբաղնդման համար ազնիվ և անձնագոհ կերպով աշխատող կուլանտեսականների նկատմամբ կուլակային տարրերի կողմից գործադրվող բռնությունների և սպառնալիքների մասին: ԽՍՀՄ կենտգործկոմը և Ժողկոմխորհն ընդունում են, վոր հանրային սեփականությունը (պետական, կուլանտեսային, կոոպերատիվային), վորը հանդիսանում է խորհրդային կարգերի հիմքը, սրբազան է և անձեռնմխելի: Այն մարդիկ, վորոնք հանդիմանում են ձեռք տալ հանրային սեփականությանը, պետք է համարվեն վորպես Ժողովրդի թշնամի, վորի համար և հանրային գույքի հափշտակության դեմ մղվելիք վճռական պայքարը հանդիսանում է խորհրդային իշխանության օրգանների առաջնադույն պարտականությունը: Յեղնելով այս նկատառումներից և ընդատաջ պնակով բանվորների և կուլանտեսականների պահանջներին, ԽՍՀՄ-ի կենտգործկոմն ու Ժողկոմխորհը վորոշում են.

1.

1. Յերկաթուղային և ջրային տրանսպորտում բեռներն իրենց նշանակությամբ հնավասարեցնել պետական գույքին և ամեն կերպ ուժեղացնել այդ բեռների պահպանումը:

2. Յերկաթուղային և ջրային տրանսպորտում բեռների հափշտակության համար վորպես դատական ռեպրեսիվ միջոց

կիրառել սոցիալական պաշտպանութեան առավելագույն չափը՝ գնդակահարութիւն, բռնագրավելով վողջ գույքը և մեղմացուցիչ պարագաների դեպքում փոխարինելով այն վոչ պակաս քան 10 տարվա ազատազրկումով և գույքի բռնագրավումով:

3. Չկիրառել ներում տրանսպորտում բեռների հափշտակման գործով դատապարտված հանցագործների նկատմամբ:

2.

1. Կոլտնտեսութիւնների և կոոպերատիվների գույքը (զաշտերում գտնված բերքը, հասարակական պաշտոները, անասունը, կոոպերատիվային պահեստները, խանութները և այլն) իր նշանակութեամբ հավասարեցնել պետական գույքին և ամեն կերպ ուժեղացնել այդ գույքի պաշտպանումը հափշտակութիւններից:

2. Կոլտնտեսային և կոոպերատիվային գույքի հափշտակութեան (գողութեան) համար վորպես սոցիալական պաշտպանութեան խիստ (ուպրեսիվ) միջոց կիրառել սոցիալական պաշտպանութեան առավելագույն չափը՝ գնդակահարութիւն, բռնագրավելով վողջ գույքը և մեղմացուցիչ պարագաների դեպքում փոխարինելով այն վոչ պակաս քան 10 տարվա ազատազրկումով և գույքի բռնագրավումով:

3. Ներումը չտարածել այն հանցագործների վրա, վորոնք դատապարտված են կոլտնտեսական և կոոպերատիվ գույքը յուրացնելու համար:

3.

1. Վճռաբար պայքար մղել հակահասարակական, կուլակային, կապիտալիստական այն տարրերի դեմ, վորոնք բռնութիւն կամ սպառնալիք կկիրառեն կոլտնտեսականների նկատմամբ, նպատակ ունենալով դրդել նրանց դուրս գալու կոլտնտեսութիւնից, վարպեսդի բռնի կերպով կործանեն կոլտնտեսութիւնը: Այդ հանցագործութիւնները հավասարեցնել պետական հանցանքներին:

2. Կուլակային և այլ հասարակական տարրերի բռնութիւններից ու սպառնալիքներից կոլտնտեսութիւններին պահ-

պանելու գործերով վորպես դատական պատասխանատուության միջոց կիրառել 5-ից մինչև 10 տարվա ազատազրկում կենտրոնացման ճամբարներում:

3. Այդ գործով դատապարտված հանցագործների վրա չտարածել ներումը:

ԽՍՀՄ-ի Կենսգործկոմի նախագահ՝ Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի նախագահ՝ Վ. ՄՈՒՌՏՈՎ,
(ՍԿՐՅԱՐԻՆ)

ԽՍՀՄ-ի Կենսգործկոմի Բարսուղա՝ Ա. ՅԵՆՈՒԿԻՉԵ

1932 թ. 7 ոգոստոսի:

8-ին փետրվարի 1933 թ.
Արդժսպկոմատ

Հավելված Բ.
ՇՐՋԱՐԱՐԱՆՆԵՐԻ ՁԵՆՔ 18

ՇՐՋԴԱՏԱԽԱՋՆԵՐԻՆ, ԺՈՂԴԱՏԱՐԱՆՆԵՐԻՆ, ԺՈՂՔՆՆԻՋՆԵՐԻՆ
ՅԵՎ ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԿՈԼԵԿՏԻՎԻՆ. ՊԱՏՃԵՆ՝ ԳԵՐԱԳ.
ԴԱՏԱՐԱՆԻՆ

«Նորհրդային իրավակարգի հիմքը հանդիսանում է հանրային սեփականութունը, ճիշտ այնպես, ինչպես կասկրտալիզմի հիմքը՝ մասնավոր սեփականութունը» (Ստալին):

Նորհրդային իրավակարգի այդ հիմքի դեմ են ուղված դասակարգային թշնամու հափշտակության և վրասարարության գաղվերը՝ «Գողություն և հափշտակում գործարաններում, գողություն և հափշտակություն յերկաթուղային բեռների, գողություն և հափշտակում պահեստներում և առևտրական ձեռնարկություններում, մասնավանդ գողություն և հափշտակություն խորհրդային տնտեսություններում և կոլանտեսություններում, այս և նախկին մարդկանց «գործունեյության» հիմնական ձևը նրանք կարծես դասակարգային բնագրով զգում են, վոր խորհրդային տնտեսության հիմքն է կազմում հանրային սեփականութունը, վոր պետք է քայքայել հենց այդ հիմքը խորհրդային իշխանությանը վրասելու համար, և նրանք իրոք աշխատում են

քայքայել հանրային սեփականութիւնը, կազմակերպելով մաս-
սայական գողութիւնն ու հափշտակութիւնն» (Մտալին):

ԽՍՀ Միութեան կառավարութեան 1932 թվի ոգոստոսի 7-ի
վորոշումը, վորը զբեւ է կուսակցութեան առաջնորդ ընկ. Ստա-
լինը, սկզբունքային ամենայն պարզորոշութեամբ դնում է հան-
րային սեփականութեան հարցը՝ Խորհրդային Միութեան մեջ:
Այդ դեկրետը բացառիկ նշանակութիւնն ունի պրոլետարական
դիկտատուրան ամրացնելու համար, մեր յերկրում կապիտա-
լիստական տարրերի վրա ծավալուն ֆրոնտով սկսված գրոհը
մինչև վերջը շարունակելու համար:

Հանրային (սոցիալիստական) սեփականութեան համար
մղվող պայքարն ավելի բարդ է և դժվարին, քան բաց կռիւլը:

Հանրային սեփականութեան պահպանումը հեղափոխական
զգոնութեան և հերոսութեան գործ է:

«Հանրային սեփականութեան պահպանութեան մարտիկներ-
ըից պահանջվում է գործնականութիւն, հաշվեառում ու վերա-
հսկողութիւն, նախ և առաջ հեղափոխական զգոնութիւնն ու անո-
ղոքութիւնն հանրային բարիքը հափշտակողներէ դեմ մղվող պայ-
քարում, ինչպիսի դիմակ էլ հազնի դասակարգային թշնամին,
գողը, նրան պետք է խտրանել շիկացած յերկաթով» (Պրավդա):

«Ահա թե ինչու խորհրդային իշխանութեան որենքներով
մեր տրամադրութեան տակ զրված բոլոր միջոցներով և բոլոր
յեղանակներով հանրային սեփականութեան պահպանութեան հա-
մար պայքարելը կուսակցութեան հիմնական խնդիրներից մեկն
է» (Մտալին):

Մարտական այս դիրեկտիվն ուղղված է նաև արդարադատու-
թեան որգաններին, վորոնց հեղափոխական որինականութեան հիմ-
նական հոգսը պետք է լինի սոցիալիստական դուքի պաշտպա-
նութիւնը:

Կուսակցութեան, պրոլետարիատի հեղափոխական կամքն է
վերջ տալ նեխված լիբերալիզմին, այն փափկամորթութեանը, վորը
ցույց են տալիս դատախազական և դատական վորոշ ողակներ՝
հանրային դուքը հափշտակողների նկատմամբ: Պետք է միան-
գամ ընդամիշտ ամրացնել այն գիտակցութիւնը, թե հանրային


սեփականութեան գողութիւնները, յուրացումը, վոչ մի կերպ և վոչ մի դեպքում անպատիժ չի կարող մնալ, չոր հեղափոխական որևէքը, վոր պրոլետարական դատարանն անողոք կերպով կպատժի հանրային սեփականութիւնը խախտող բոլոր անձանց և առաջին հերթին՝ դատակարգային թշնամուն (կուլակին, նեպմանին, սպեկուլյանտին)։ Հանրային սեփականութեան պաշտպանութեան յերկու հիմնական միջոցներ կան. դրանցից առաջինը պրոֆիլակտիկ ձեռնարկումներն են, վորոնք պետք է կատարվեն անտեսական որդանների, կոոպերատիվ և կոլտնտեսական կազմակերպութիւնների կողմից, ինչպես և դատախազական մարմինների նախաձեռնութեամբ և առաջարկութեամբ։ Իշխանութեան բոլոր որդանների և անտեսական բոլոր ձեռնարկութիւնների համար պարզ պետք է լինի այն հանգամանքը, վոր այնտեղ, վորտեղ ղեկավարները չեն տիրապետում իրենց գործին, հեշտանում է գողի, խարերայի և մասաբաբի աշխատանքը, վոր այնտեղ, վորտեղ չկա հաշիվառում և վերահսկողութիւն, վոր այնտեղ, վորտեղ չկան կովիված, աշարուրջ կտղերը, այնտեղ, վորտեղ դեռ ապարատում խցկված են մնում հակախորհրդային, քայքայված ելեմենտներ, այնտեղ հեշտանում են ու ծավալվում գողութեան, յուրացման ու հափշտակութեան յերևութիւնները։

Աշխատանքի ձիշտ կազմակերպումը կոոպերատիվներում, կոլեկտիվ և խորհրդային անտեսութիւններում, տրանսպորտում սեկավարութեան սխտեմը, աշխատակիցների ընտրութիւնը, հասարակական կոնտրոլը հանրային սեփականութեան վրա, սրանք վճռական նշանակութիւն ունեն սոցիալիստական գույքի դեմ սուղված հանցադործութիւնները կանխելու, նվազեցնելու գործում։ Դատախազական որդանների ավագ պարտականութիւնն է կազմակերպել հանրային գույքը պահպանելու համար անհրաժեշտ պրոֆիլակտիկ ձեռնարկումները, սխտեմատիկ ստուգման լենթարկել այդ սուղութեամբ իշխանութեան համապատասխան որդանների վորոշումների և արված առաջարկութիւնների կատարումը սպահովել գլխավորապես հասարակական ակտիվի կողմից ահազանգումը սոցիալիստական (պետական, կոլտնտեսական, կոոպերատիվ) սեփականութեան պաշտպանութիւնը վտանգող

յերևույթները և փաստերը, ժամանակին ձեռք առնել ներգործական անհրաժեշտ միջոցներ այն դեկավարները դեմ, վորոնք իրենց անհոգությամբ և հանցավոր անփութությամբ յուրացնում են հափշտակիչները, ֆրասարարների սև գործը:

Հեղափոխական որինականության, խորհրդային արդարադատության մարմինների նույնքան կարևոր յերկրորդ պարտականությունն է խստորեն պատժել խորհրդային իրավակարգի հիմքը կազմող հանրային սեփականությունը հափշտակող, յուրացնող ժողովրդական թշնամիներին, նման գործերի դատական պրոցեսները շուրջը՝ մտքի իզայիայի յենթարկելով խորհրդային հասարակայնության, պրոլետարական-կոլանտեսական մասսաների հեղափոխական գլոնությունը:

Ոչոտտուի 7-ի պատմական վորոշման հրատարակումից անցել է 6 ամիս: Դատական-դատախազական օրգանների կիսամյա գործունեյության պրակտիկան հիմք է ապիւս ընդգծելու, վոր մեր անտեսական օրգաններն ու կազմակերպությունները դեռ լիովին չեն դնահատում Միության կառավարության այդ դեկրետի բացառիկ քաղաքական նշանակությունը դասակարգային պայքարի ընթացիկ ետապում, վոր նշանք շատ քիչ են ոգնում արդարադատության մարմիններին՝ սոցիալիստական գույքի հափշտակություններին դեմ մղվող պայքարի պրոցեսում և վերջապես, վոր դատախազական-հետևողական, անողոր պայքարը հանրային սեփականությունը գողացող, յուրացնող ֆրասարարների, դավաճանների դեմ (Որինակ, Լեն. միացյալ դատարան, յերկաթուղային դատարան, Աշտարակ, Աղբաբա և Գորիս): Սրգարադատության ժողովրդական կոմիսարիատը կարականապես պահանջում է հեղափոխական որինականության բոլոր օղակներից՝ լինել արթուն և հեղափոխական գլոնությամբ ու բողոքի կորեն պահպանել մեր իրավակարգի հիմքը՝ հանրային (սոցիալիստական) սեփականությունը, ամենակարճ ժամանակի ընթացքում վերացնելով Գերագույն դատարանի № 111 (1932 թ.) շրջաբերականում հիշատակված բացերը:



Վերջում Պ. ԲՈՐՈՍՏԱՆ

Խմբագրեց Հ. Գալիկյան
Լեզվական խմբ. Գ. Քերգիբաջյան
Մտպագրիչ Ա. Տ. Մկրտչյան
Հանձնված է արտադրության 25 հունվարի 1983 թ.
Յտարագրված է սպազրեկու 10 դեկտեմբերի 1983
Գլավիտ թ 7769 (թ). Լրատ. թ 162.
Փասվեր թ 71. Տիրած 3,000 94,000 օպ. Ցօ.

Կուսիտոթ սպազրան. Ցեհեվան.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038332

(134)

ОХРАНА
ОБЩЕСТВЕННОЙ
СОБСТВЕННОСТИ

ПАРТИЗДАТ
ЭРИВАНЬ

1 9 3 3



589
A $\frac{11}{383}$



ԳԻՆԸ 25 Կ.